ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Քաղաքացիական գործ թիվ *ԵԴ2/9852/02/24*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահող դատավոր Ա. Ծիլաջյանի

2024 թվականի դեկտեմբերի 30-ին քաղաք Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան) քննարկելով կասեցումը վերացնելու վերաբերյալ պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑ

Դատարանի վարույթում է գտնվում քաղաքացիական գործն ըստ հայցի Խաչպար ՍՊ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲ ընկերության՝ թիվ ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 15.11.2024 թվականին կայացած թիվ 2/2-րդ նիստի արձանագրության թիվ 1.1, թիվ 2 և թիվ 3 կետերով Խաչպար ՍՊ ընկերության մասով ընդունված որոշումներն անվավեր ճանաչելու, ՈՒԱԿԷԱՃԱՊՁԲ-25/14 ծածկագրով էլեկտրոնային աճուրդում թիվ 5-րդ և 14-րդ չափաբաժինների մասերով Խաչպար ՍՊ ընկերության ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին:

Դատարանի 04.12.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Պատասխանողի ներկայացուցիչը 30.12.2024 թվականին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ խնդրելով վերացնել թիվ ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14 ծածկագրով գնման գործընթացի կասեցումը, որով հայտնել է, որ պատասխանողի կողմից մատուցվող բժշկական ծառայությունների բնույթը, օրական ծանրաբեռնվածությունը, մասնավորապես. հազարավոր բուժառուների հանրային շահը՝ առողջության պահպանմանը և բարելավմանը ուղղված միջոցառումների ձեռնարկումը, սույն գնման ընթացակարգում ներառված գնման առարկաները անհրաժեշտ են ընկերության բնականոն գործունեությունը ապահովելու՝ պատշաճ բժշկական ծառայություններ մատուցելու համար: Ելնելով վերոգրյալից և վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության 234.11-րդ հոդվածը խնդրել է՝ վերացնել գնման գործընթացի կասեցումը, բացառությամբ՝ 5-րդ և 14-րդ չափաբաժինների:

Ուսումնասիրելով միջնորդությունը, հայցադիմումը և հայցադիմումին կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդությունը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ

հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:
Նման պայմաններում, Դատարանը, քննության առնելով պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը, ուսումնասիրելով քաղաքացիական գործի նյութերը, ինչպես նաև միջնորդությամբ նշված գնման գործընթացի կասեցումը վերացնելու հիմքերի առկայության վերաբերյալ հիմնավորումները, գալիս է այն եզրահանգման, որ միջնորդությունը հիմնավոր է, բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներից, ուստի այն ենթակա է բավարարման:
Հետևաբար, Դատարանը գտնում է, որ պետք է վերացնել թիվ ՇՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14 ծածկագրով գնման գործընթացի կասեցումը, բացառությամբ՝ 5-րդ և 14-րդ չափաբաժինների:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ և 361-րդ հոդվածներով և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը բավարարել: Վերացնել թիվ ՇՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14 ծածկագրով գնման գործընթացի կասեցումը, բացառությամբ՝ 5-րդ և 14-րդ չափաբաժինների:
2. Որոշումը կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան այն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Digitally signed by SHILAJYAN ANNA 5208910872
Date: 2024.12.30 13:46:40 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am